ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Ինգա Վալերիի Նասիլյան
Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի
դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Կորպորատիվ կուլտուրայի կարևորությունը արդի ժամանակի կառավարման համակարգում անհերքելի փաստ է, որի իրականացման համար անհրաժեշտ է մշակել ազգային մոդել և դրա համար նախատեսել համապատասխան բնութագրիչներ և գործոններ: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև երկրի տնտեսական, ռեսուրսային ապահովվածության, սոցիալական, պատմական, աշխարհագրական, հոգեբանական, կրոնական և այլ համակարգերը[1]:

Կորպորատիվ կուլտուրայի տեսանկյունից առավել կարևոր է կրոնական համակարգը, որը մարդկանց գործողությունների իմաստի և դրդապատճառների ապահովման ոչ նյութական, հոգևոր միջոցներից է, և այն որոշում է հասարակության բարոյականությունը և գերակշռող արժեքները, որոնց հիման վրա կողմնորոշվում են այդ համակարգում գործող կազմակերպությունները: Կրոնը նաև հանդես է գալիս որպես իրականության հետ սոցիալական տարբեր խմբերը հարմարեցնելու մեխանիզմ, տարերայնորեն կազմավորվող զանգվածային գիտակցությունը համակարգող, ավարտուն տեսքի բերող միջոց[2]: Այսպիսով՝ արդի պայմաններում կրոնը մարդու աշխարհայացքային-վարքագծային ակտիվության գլխավոր կարգավորիչներից մեկն է: Հր. Շաքարյանը նշում է, որ կրոնա-մշակութային տարբերությունները շատ ավելի դժվարություններ են ներկայացնում մարդկության միավորման գործում, ավելին, քան նույնիսկ ավանդական սոցիալական կամ քաղաքական-գաղափարական գործոնները[3]: Ուստի, ժամանակակից տնտեսության զարգացումը, գլոբալացումը, աշխատուժի միգրացիան, միջազգային կազմակերպությունների ստեղծումը առաջ են քաշում սոցիալ-մշակութային, կրոնական բարոյականության առանձնահատկությունների հաշվառում:

Ըստ Ի. Յաբլոկովի՝ կրոնական բարոյականության համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում սոցիալ-կորպորատիվ գաղափարները և

---

[1] **Գյուրջյան Ա., Նասիլյան Ի.** Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2009, էջ 17:

[2] **Դեմիրճյան Մ.** Ազգային ինքնուրույնությունը և դիցարարությունը մշակույթների երկխոսության ժամանակակից պայմաններում. Վասն արդարեության, Երևան, N10(46), 2003, էջ 34:

[3] **Շաքարյան Հ.** Փիլիսոփայություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2005, էջ 45:

պատկերացումները, որոնք արտացոլում և արտահայտում են տարբեր հասարակական խմբերի և շերտերի դիրքորոշումները: Ընդ որում՝ կրոնական բարոյականության սոցիալ-կորպորատիվ բովանդակությունը և կրոնաբարոյական պահանջները տարբեր պատմական դարաշրջաններում լինում են բացարձակ անմիատարր[1]:

Կրոնական բարոյականության մեջ կան մի շարք պարզ և կարևոր նորմեր, բարոյական արժեքներ, սոցիալական համակեցության սկզբունքներ, հավերժական բարոյական հիմնախնդիրների վերաբերյալ դատողություններ և դիտարկումներ, բնական միջավայրի հետ համագործակցման կանոններ և այլն, որոնք հիմնավորվում են հասարակության մեջ, դառնում են ընդունելի նաև աշխարհիկ մարդկանց համար: Այսպես՝ աշխարհիկ շատ հայեցակարգեր ընդունում են մարդկային կարևոր արժանիքները՝ արժանապատվություն, ազնվություն, պատվի զգացողություն, խիղճ, մարդասիրություն և այլն, որոնք ունեն կրոնական ծագում: Առանձնապես այս մոտեցումը կարևոր է, երբ խոսքը վերաբերում է տնտեսական ոլորտի կառավարման բարոյականությանը, որտեղ տնտեսական և կրոնական շահադրդումները փոխկապակցված են: Այս հարցի վերաբերյալ գոյություն ունեն նաև հակառակ կարծիքներ: Այսպես՝ Վ. Բաչինինը գտնում է, որ ժամանակակից Ռուսաստանի տնտեսական կյանքում չեն գործում կրոնական բարոյականության նորմերը: Այսօր գործում են միայն աշխարհիկ (ապակրոնական, սեկուլյար), պրագմատիկ նորմերը: Գործարարների գերակշռող մասն ընդհանրապես գտնում է, որ կրոնը այս գործում անելիք չունի և անգամ համոզված են, որ այն կարող է դառնալ խոչընդոտող գործոն: Սակայն հեղինակը նշում է նաև, որ Ռուսաստանը դեռ շատ անելիքներ ունի այդ խնդրի վերաիմաստավորման և կրոնական շահադրդման միջազգային փորձի ընկալման ուղղությամբ: Ըստ նրա՝ Ռուսաստանի տնտեսությունը կարող է ավելի արդյունավետ աշխատել, եթե տնտեսության և կրոնի միջև համապատասխան կամուրջներ գցվեն[2]: Կարծում ենք՝ նույնը վերաբերում է նաև Հայաստանին:

Ժամանակին Մ. Վեբերը կարողացավ ցույց տալ բողոքականության բարենպաստ ազդեցությունը Արևմտյան Եվրոպայի տնտեսական կյանքի վրա: Նրա համար ակնհայտ էր, որ ոչ միայն նյութական-տնտեսական կյանքն է ազդում հասարակության կրոնական կյանքի վրա, այլև կրոնն է ազդում տնտեսական ոլորտի վրա: Կրոնական գիտակցությունը խթանում է տնտեսական ակտիվության որոշ ձևերը և հակազդում ուրիշների վրա: Ի

---

[1] Основы религиоведения: Учеб. / Борунов Ю. Ф, Яблоков И. Н. и др. Под ред. И. Яблокова. 3-е изд., М.: Высш. Шк., 2000, сс. 436-447.

[2] **Бачинин В.А.** Христианская культура и экономическое сознание // Вопросы культурологии, М., N6, 2008, с. 28.

դեպ՝ կրոնի և տնտեսության միջև կապող օղակ են հանդիսանում բարոյաէթիկական բնույթի նորմատիվային-արժեքային կառուցվածքները[1]:

Գոյություն ունի այն պատկերացումը, որ տնտեսական գիտակցության և վարքագծի նմանությունները և տարբերությունները կախված են այն գործոններից, որոնք կրում են մշակութակրոնական ենթատեքստ: Ըստ Ֆ.Ֆուկույամայի՝ «Կրոնը, ինչպես միշտ, մնում է մշակութային նորմերի կարևոր աղբյուր անգամ ապակրոնական հասարակարգերում»[2]: Կրոնի և տնտեսական կուլտուրայի փոխհարաբերությունները ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է գտնել կապը եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների ու դրանց կրոնական առանձնահատկությունների միջև՝ քրիստոնեական, մահմեդական, հնդկա-բուդդիստական, հեռավորարևելյան-կոնֆուցիական: Ընդ որում՝ ինչ վերաբերում է կոնֆուցիականությանը, ապա դարեր շարունակ աստվածաբանության, փիլիսոփայության, հոգեբանության և այլ ոլորտի մասնագետները անդրադարձել են այն հարցին, թե կոնֆուցիականությունը կրոն է, թե՞ ուսմունք: Այս հարցի քննարկման մեջ են ներգրավվել ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան գիտնականները: Արդի ժամանակներում գերակշռում է այն տեսությունը, որի համաձայն՝ կոնֆուցիականությունը փիլիսոփայական, բարոյական բարձր արժեքների գաղափարախոսություն է, որը լուրջ ազդեցություն է ունեցել այլ կրոնների արժեքների վրա: Այսպիսով՝ համաշխարհային կրոնները պատմականորեն մեկուսացված չեն եղել, քրիստոնեությունն իր արմատներով կապված է եղել հուդայիզմի, մահմեդականությունը՝ քրիստոնեության հետ: Հրեական քրիստոնեական համայնքները ապրել են մահմեդական համայնքների հարևանությամբ: Տրամաբանական է, որ հենց այս հանգամանքն էլ ստեղծել է մտածելակերպի ընդհանրություն և հոգեհարազատություն նրանց միջև, նույն թվում և՝ սոցիալ-տնտեսական ոլորտում: Ե՛վ քրիստոնեության մեջ, և՛ մահմեդականությունում ընդունված է եղել մասնավոր սեփականությունը, որոնց համար ընդհանուր է եղել այն դրույթը, ըստ որի՝ ոչ ազնիվ աշխատանքով ձեռք բերված փողերը և հարստությունը անբարոյական են: Համաձայն քրիստոնեության՝ բոլոր բարիքները պատկանում են Աստծուն, և մարդը, ինչ էլ որ ունի, ստանում է նրանից: Այսպիսով՝ մարդը ոչ թե սեփականատեր է, այլ այդ բարիքներից օգտվող, վայելող: Նույն մոտեցումն ունի և մահմեդականությունը: Այդ կրոնների համար ընդհանուր են նաև կուտակման սկզբունքները: Շահի և օգուտի նկատմամբ կուտակման սերը պետք է ինքնանպատակ չլինի: Մարդը պետք է ձգտի հոգևոր, բարոյական

---

[1] **Вебер М.** Избранные произведения, М.: Прогресс, 1990, с.21.

[2] **Фукуяма Ф.** Социальный капитал: культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу, М.: Московская школа политических исследований, 2002, сс.115-146.

կատարելագործման, սակայն ռուսական ուղղափառությունն, օրինակ, որոշակի ձգտում ունի դեպի կյանքի որակի բարձրացման, այլ ոչ թե հարստության և շքեղության: Ե՛վ քրիստոնեության, և՛ մահմեդականության համար կարևոր են հարստության ձեռք բերման հարցերը: Չափորոշիչ պետք է լինի ազնվությունը: Խաբեությունը, ապօրինի կուտակումները մարդուն տանում են կործանման: Քրիստոնեությունը օրինական է համարում սոցիալական ստորակարգությունը, դատապարտում է թշնամությունն ու նախանձն ավելի հարուստ և ավելի բարձր դիրք ունեցող մարդկանց հանդեպ: Նույն հայեցակարգն ունի նաև մահմեդականությունը: Ըստ որի՝ «Ունեցվածքային անհավասարությունը ոչ միայն անհրաժեշտ է որպես տնտեսական ակտիվության խթան, այլ նաև ի սկզբանե մարդկանց հավասար լինելու գաղափարախոսության շարունակությունն է… Աստված մարդկանց ստեղծել է տարբեր բնավորություններով և ունակություններով, և անարդար ու հանցավոր կլինի մարդկանց զրկել իրենց աշխատածից»[1]:

Անհավասարության մեղմման ուղիներից մեկը բարեգործությունն է: Քրիստոնեությունը աղքատներին և դժբախտներին օգնելը համարում է մարդու «պարտադիր պարտականությունը»: Մերձավորին օգնելն ավելի շատ պահանջ է, ոչ թե ցանկություն, ոչ թե առաջարկություն է, այլ՝ օրենք: Մարդը գթասիրությամբ Աստծուն վճարում է խիստ արդարության պարտքը: Պարտադիր չէ, որ օգնությունը միայն նյութական լինի, այն կարող է լինել և՛ հոգեբանական, և՛ ժամանակի հատկացում, և՛ որևէ գործի աջակցում և այլն: Օգնության մերժումը մեղք է համարվում, որն իր հետևից պատիժ է բերում: Սակայն եկեղեցական հայրերը պնդում են, որ ողորմությունը ոչ թե բոլորին, այլ պետք է միայն կարիքավորներին տալ: Կրոնը չի խրախուսում շռայլությունը ո՛չ ընդհանրապես, ո՛չ բարեգործության մեջ: Ամեն ինչում պետք է պահպանվի չափի զգացումը: Ա.Սուսոկոլովը գտնում է, որ գործարարների խավի հաջող ձևավորման գործընթացը զգալիորեն կախված է նրանից, թե ինչպես է բնակչությունը ընկալում գործարարությանը բնորոշ արժեքները, որոնց շարքին են պատկանում նաև կրոնական արժեքները: Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել կրոնի և գործարարության փոխհարաբերությունների առանձնահատկությունները[2]: Այդ նպատակով հեղինակը առաջարկում է անցկացնել հարցում և հարցաթերթում նախատեսել այն հարցերը, որոնք արտացոլում են բնակչության ժողովրդագրական կազմը, վարքագիծը և սպառման ոլորտի

---

[1] **Солодова Г.С.** Религиозные основы экономической культуры (общность социально-экономических представлений в православии и исламе) // Вопросы культурологии, М., N6, 2008, сс. 14-15.

[2] **Сусоколов А.А.**, **Четырчинская О. С.** Влияние религиозной принадлежности на установки в сфере предпринимательства (на примере современной России) // Вопросы культурологии, М., N6, 2008, с. 32.

հիմնադրույթները, նաև՝ սոցիալ-հոգեբանական բնութագրիչները՝ տնտեսական կուլտուրայի տարբեր ասպեկտները:

Այս տեսանկյունից հետաքրքիր է Ռուսաստանում անց կացված հարցումը (2002-2004թթ), որին մասնակցել են հարյուր հազար մարդ: Հարցման արդյունքները հետևյալն են.

•հուդայականների մեջ սեփական բիզնես կազմակերպելու և մրցակցության մեջ մտնելու պատրաստների տոկոսը ամենաբարձրն է: Այս մարդիկ նաև կողմնորոշված են դեպի նյութական հաջողությունը:

•քրիստոնյաների մոտ ռիսկի դիմելու ցածր ցուցանիշը համապատասխանում է Գ. Հոֆսթեդի հետազոտման արդյունքներին: Եվ դրանով է ռուսների մոտ պայմանավորված անորոշությունից խուսափելու, դեպի կայունության ձգտելու բարձր մակարդակը[1]:

•կրոնական պատկանելությունը ազդում է գործունեության ոլորտի ընտրության վրա:

•նույն սոցիալ-ժողովրդագրական խմբերի հարցվողները կարող են ունենալ նույն գործարարական կողմնորոշումը, բայց տարբեր դավանանք:

•ինչպես հուդայականները, այնպես էլ երիտասարդ քրիստոնյաները ձգտում են ապահովված կյանքի:

Ինչ վերաբերում է կրոնական նորմերի պահպանմանը, ապա քրիստոնեությունը ավելի քիչ է ուշադրություն դարձնում տնտեսական հարցերին: Այստեղ չկան աստվածաշնչյան, հատուկ մշակված ու հիմնավորված տնտեսական բարոյական կանոններ: Հուդայականությունը և մահմեդականությունը այս հարցում ավելի առաջադեմ են, որովհետև դրանց կայացման ժամանակաշրջանում և ավելի ուշ նրանց հիմնական սոցիալական խմբերը եղել են շուկայական խիստ մրցակցության պայմաններում: Հուդայականության տնտեսական սկզբունքները ձևավորվել են այլ ազգերի կողմից ստեղծված շուկաներին հարմարվելու ընթացքում: Արդի հուդայականները՝ այս հավատքի ստեղծողների ժառանգները, հարյուրամյակների ընթացքում իրենց կրոնը հարմարեցրել են նոր պայմաններին և հասցրել մինչև մեր օրերը, իսկ մահմեդականության տնտեսական կողմնորոշումը պայմանավորված է նրանով, որ առաջին մահմեդականները պայքարել են ոչ միայն հավատքի, այլև քարավանների ճանապարհների վրա վերահսկողություն հաստատելու համար:

Աշխարհիկ օրենքներին ենթարկվող երկրներում ապրող մահմեդականները չեն ենթարկվում Շարիաթի օրենքներին, երբեմն անգամ ծանոթ չեն դրանց: Ուստի, տվյալ դեպքում, կրոնի ազդցությունը արտահայտվում է ոչ թե կոնկրետ կանոնների կատարման մեջ, այլ դրա

[1] **Сусоколов А. А.** Культура и обмен. Введение в экономическую антропологию. М.: SPS 2- «Русская понорама», 2006, с. 258.

հիմնական նորմերի և բարոյական սկզբունքների ընդունման մեջ: Բացի այդ՝ և՛ հուդայականությունը, և՛ մահմեդականությունը հարյուրամյակների ընթացքում իրենց հարաբերությունները կարգավորել են այն խմբերի հետ, որոնք գտնվել են տարբեր երկրների իրավասության տակ: Այդ պատճառով էլ այս երկու կրոնները, ունենալով պատմական տարբեր ճակատագրեր, ունեն բավականին մշակված ու հիմնավորված տնտեսական վարքագծի նորմեր:

Հետազոտելով կրոնի՝ տնտեսության վրա ազդեցության պատմական տվյալները՝ Վ. Բաչինինը եկել է այն եզրակացության, որ եթե Ռուսաստանում աճի քրիստոնյաների քանակը, ապա երկիրը կսկսի հարստանալ: Հայտնի է, որ գոյություն ունեն քրիստոնեական մի շարք ուղղություններ՝ բողոքականներ, կաթոլիկներ, ուղղափառներ, առաքելականներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ազդում տնտեսական կյանքի վրա: Իր աշխատանքում հեղինակը ներկայացրել է հետևյալ տվյալները. այն երկրներում, որտեղ բողոքականների քանակը 50%-ից ավելի է, նրանք 8 անգամ տնտեսապես ավելի զարգացած են այլ գերակշռող դավանանք ունեցող երկրների համեմատ (նույն թվում և՝ աթեիստական): Կաթոլիկների դեպքում՝ տվյալ ցուցանիշը կազմում է 1,5 անգամ ավելի[1]:

Սակայն, մասնագետների մոտ կա նաև մեկ այլ մոտեցում, համաձայն որի՝ որոշ կաթոլիկ երկրներում առկա է տնտեսական առաջընթաց, որը բացատրվում է նրանով, որ այդ երկրները կարողանում են համախմբել վերափոխումային ջանքերը՝ միաժամանակ թույլ տալով բավականին մեծ մրցակցություն: Այսօր հնչում են ենթադրություններ, թե առաջնորդությունը ոչ այնքան բողոքականներից անցնում է կաթոլիկներին, որքան քրիստոնյաներից՝ ոչ քրիստոնյաներին (օրինակ՝«Ասիական վագրերին»): Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ XX դարի վերջից մինչև XXI դարի սկիզբը ապակրոնական և տեղեկատվական հեղափոխությունը փաստացի համահարթեցրին տարբեր կրոնական երանգ ունեցող տնտեսական համակարգերի միջև եղած տարբերությունները: Աշխարհականացումը (սեկուլիացիա) մի կողմից վերացրեց տնտեսական առաջընթացը խոչընդոտող պատճառները, մյուս կողմից, սկսեց փլուզել ընտանեկան, բարոյական, հոգևոր և այլ արժեքների հետ կապված տնտեսական բարգավաճման կարևոր պայմանները: Այս հանգամանքը թույլ տվեց «Ասիական վագրերին», օգտագործելով սեփական սոցիալ-կրոնական մեխանիզմները, հաջողությամբ մրցակցել արևմտյան երկրների հետ:

Վ. Բաչինինը, ուշադրությունը բևեռելով պատմական փորձի վրա, նշում է, որ Ռուսաստանը «նոր հրաշք» աշխարհ կարող է կառուցել՝ հիմնվելով կրոնի, ավանդական մշակույթի վրա, ինչը դարերով եղել է ռուս մարդու

[1] **Бачинин В.А.** Христианская культура и экономическое сознание // Вопросы культурологии, М., N6, 2008, с. 30.

հոգին սնուցող միջավայր, նրա ոչ միայն հոգևոր, այլև տնտեսական մտածելակերպը ձևավորող աղբյուր[1]: Կարծում ենք՝ այս փորձն անհրաժեշտ է հաշվի առնել և օգտագործել նաև Հայաստանում:

Արդի Ռուսաստանում գերիշխող կրոնական արժեքները իրենց արտացոլումն են գտել ռուսական ուղղափառ եկեղեցու կողմից 2004 թվականին ընդունված «Քրիստոնեական գործարարության սկզբունքները» («Принципы христианского предпринимательства») հայեցակարգում, որում հիմնական ուշադրությունը բևեռված է գործարարության նպատակներին: Մասնավորապես, հիմնավորված է, որ շահույթը չպետք է լինի ինքնանպատակ, այլ պետք է լրացվի բարեգործությամբ և հասարակությանը ծառայելու ձգտումով: Եվ այդ կապակցությամբ բավականին գիտական ուսումնասիրություններ նվիրված են բիզնես վարելու մոտեցումներին՝ գործարար հարաբերությունների կուլտուրա, ազնիվ մրցակցություն և այլն[2]:

Այսպիսով՝ կարևորելով կրոնի դերը ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի ձևավորման գործում, կարելի է փաստել, որ այն կարող է հանդես գալ և՛ որպես կառավարման մոդելի առանձին բնութագրիչ (օրինակ՝ Մ. Բոնդը, Ս. Նակատանը և Կ. Սիվակումարը իրենց առաջարկած մոդելներում օգտագործել են «կոնֆուցիական դինամիկա» բնութագրիչը[3], և՛ որպես ազգային կորպորատիվ կուլտուրան բնորոշող ինքնուրույն գործոն):

Հոդվածում, հիմնվելով ներկայացված տեսական և գործնական դրույթների վրա, նպատակ է դրվել նաև ուսումնասիրել հայկական քրիստոնեական բարոյականության նորմերի ազդեցությունը գործարար միջավայրի կորպորատիվ կուլտուրայի ձևավորման վրա՝ հիմնվելով հայ քրիստոնեության որոշ պատմական փաստերի վրա: Քրիստոնեության ընդունումը Հայաստանում նոր արժեքների և բարոյականության նորմերի հիմք դարձավ կորպորատիվ կուլտուրայի սկզբունքների ստեղծման համար, որոնք ինչպես դրական, այնպես էլ բացասական ձևով արտահայտվեցին հայ պատմիչների, մտավորականների աշխատանքներում: Դրանց ուսումնասիրությունը կնպաստի ազգային մտածելակերպի այն հատկանիշների բացահայտմանը, որոնք առկա են մինչև այսօր:

Այս գործընթացի համար մեծ նշանակություն ունեցավ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծումը, որը հնարավորություն տվեց հայ մշակույթի գործիչներին իրենց վարքաբանական-մեկնողական

---

[1] **Бачинин В.А.** Христианская культура и экономическое сознание. // Вопросы культурологии, М., N6, 2008, с. 31.

[2] **Сусоколов А. А., Четырчинская О. С.** Влияние религиозной принадлежности на установки в сфере предпринимательства (на примере современной России) // Вопросы культурологии, М., N6, 2008, сс. 32-36.

[3] **Գյուրջյան Ա., Նասիլյան Ի.** Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2009, էջ 123-128:

աշխատություններում բնութագրել բարոյական նոր նորմեր, որոնք պայմանավորված էին և՛ քրիստոնեական գաղափարախոսությամբ, և՛ ազգային հատկանիշներով: Հայկական բարոյական նորմերի ձևավորման վրա լուրջ ազդեցություն ունեցան եկեղեցական ժողովների որոշումները: Այսպես՝ հայ ազգի սոցիալ-տնտեսական կյանքի կանոնակարգման առաջին փորձ է համարվում Աշտիշատի ժողովը (365 թ.), որը «շատ հայրենական կարգեր ու կանոններ հաստատեց»[1]: Շահապիվանի ազգային եկեղեցական ժողովը (444թ.) կարևոր նշանակություն է ունեցել հայ առաքելական եկեղեցու հիմքերի ամրապնդման, պետականության բացակայության պայմաններում նրա դերի ճշտման և բարձրացման, հայ իրավական մտքի, գործարար կուլտուրայի ձևավորման և զարգացման գործում[2]: Քրիստոնեական կամ վարդապետության ընդհանուր հարցադրումների շրջանակներում հայ մտածողները կարողացել են ձևակերպել միանգամայն աշխարհիկ սկզբունքներ, ազգային միաբանությանը միտված դրույթներ, որոնք առնչվում են իշխանավորի և ստորադրյալի փոխադարձ պատասխանատվությանը, ղեկավարի անձնային հատկությունների, նրա անձնական օրինակին, արդարացի վարձահատուցման ապահովմանը, չափավորության դերին և այլն[3]:

Ամբողջական ձևով հայկական քրիստոնեական բարոյականության նորմերը ներկայացրել է Պողոս պատրիարք Ադրիանուպոլսցին իր «Խրատի թանգարան»-ում, որն առաջին անգամ տպագրվել է Երուսաղեմում 1870թ.: «Խրատի թանգարան»-ում հեղինակն առանձին բաժնով ներկայացրել է հայ քրիստոնեական բարոյականության նորմերը և դրանց ներկայացվող պահանջները: Որպես դրական նորմեր՝ ներկայացված են ազգասիրությունը, առաքինությունը, խոհեմությունը, գաղտնապահությունը, արդարությունը, ճշմարտությունը, չափավորությունը, հնազանդությունը, համբերությունը և այլն: Ինչպես տեսնում ենք՝ այս հատկանիշները խիստ կարևոր են տնտեսական ոլորտում արդյունավետ գործունեություն ծավալելու համար[4]: Ուստի՝ դրանց կարելի է օգտագործել որպես բնութագրիչներ ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի մշակման համար:

---

[1] **Պետրոսյան Ե. Բ.** Հայ եկեղեցու պատմություն, Եր. «Հաղբատավանք», ԲՄ հրատ., 1990, էջ 30:

[2] **Ղազարյան Ա.** Շահապիվանի ազգային եկեղեցական ժողովի կանոնների գործառութային նշանակությունը հայոց պետականության բացակայության պայմաններում, Վասն արդարեության, Երևան, N42, հունիս, 2003, էջ 13:

[3] **Թովմասյան Ն. Ռ., Թամրազյան Հ. Հ., Պապիկյան Գ. Թ.** Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 80:

[4] Անդրիանուպոլսեցի Պողոս Պատրիարք. Խրատի թանգարան. Երկրորդ վերանայված հրատարակություն. Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2002, էջ 52-218:

Պողոս պատրիարքը «Խրատի թանգարան»-ում ներկայացրել է նաև այն բացասական հատկանիշները, որոնք խորթ են հայկական քրիստոնեական բարոյականությանը և այն անվանել է «Մոլորություններ»: Պատրիարքը, որպես մոլորություններ, մասնավորապես նշում է չարությունը, հպարտությունը, շռայլությունը, նախանձը, ապերախտությունը, ագահությունը, անգործությունը, հարբեցողությունը, բամբասանքը, սուտը և այլն[1]: Կարծում ենք՝ այս բացասական նորմերը նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության կորպորատիվ կուլտուրայի մոդելները և բարոյական կոդեքսները մշակելիս:

Այսպիսով՝ ուսումնասիրելով կրոնի ազդեցության կարևորությունը գործարար միջավայրի կորպորատիվ կուլտուրայի ձևավորման վրա, առաջարկում ենք՝

1. Եկեղեցին պետք է ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերի երկրի գործարար միջավայրի զարգացման գործում՝ տարբեր հիմնադրամների և մրցանակների միջոցով խրախուսելով քրիստոնեական բարոյականության պահանջներին համապատասխանող գործարարությունը և առանձին գործարարների:
2. Կարևորելով կրոնի դերը գործարարության մեջ՝ առաջարկում ենք տարբեր կրոնական համակարգեր ունեցող սուբյեկտների գործնական հանդիպումների գործընթացում, հաշվի առնել գործընկերոջ կրոնական պատկանելությունը, դրա առանձնահատկությունները՝ ցուցաբերելով կրոնին համապատասխան վարքագիծ և հանդուրժողականություն: Այս դեպքի համար արդյունավետ կլինի մշակել համագործակցության ռազմավարություն, որտեղ բացի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ գործոններից՝ ներկայացված լինեն նաև կրոնական հարցերը:
3. Առաջարկում ենք, որ յուրաքանչյուր կազմակերպություն իր կորպորատիվ կուլտուրայի մշակման գործընթացում հաշվի առնի նաև ազգային քրիստոնեական բարոյականության նորմերի պահանջները: Քանի որ հայ ազգի համար կարևոր արժեքներ են համարվում աստվածաշնչյան պատվիրանները, ապա առաջարկում ենք դրանց հաշվի առնել կազմակերպության բարոյական կանոնակարգի (կոդեքսի) մշակման համար: Խորհուրդ է տրվում նաև ավանդույթ դարձնել որոշ ազգային եկեղեցական տոների համատեղ նշումը:

[1] Անդրիանուպոլսեցի Պողոս Պատրիարք. Խրատի թանգարան. Երկրորդ վերանայված հրատարակություն. Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2002, էջեր 241-375:

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Ինգա Վալերիի Նասիլյան
Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի
դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Համառոտագիր

Արդի ժամանակի կառավարման կարևոր բաղադրամասերից է կորպորատիվ կուլտուրան, որի ձևավորման համար մշակվում են համապատասխան մոդելներ, որոնց վրա ազդում են մի շարք սոցիալ-տնտեսական համակարգեր, և դրանց մեջ իր զգալի դերն ունի կրոնը: Հոդվածում ուսումնասիրված է կրոնական տարբեր դավանանքների և մասնավորապես՝ կրոնական բարոյականության ազդեցությունը գործարար միջավայրի վրա, որն իրականացվում է կորպորատիվ կուլտուրայի միջոցով: Հոդվածում ներկայացված են տարբեր մասնագետների քննադատական մոտեցումները տվյալ հարցին, նաև մի շարք կոնկրետ գործնական առաջարկներ: Ուսումնասիրված են նաև հայկական քրիստոնեական բարոյական նորմերի և ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի փոխկապակցվածության խնդիրները և ներկայացված են դրանց լուծման տարբերակները:

Բանալի բառեր՝ կորպորատիվ կուլտուրա, կրոնական համակարգ, կրոնական դավանանք, կրոնական բարոյականություն, կառավարման մոդելներ, արժեքներ, գործարար միջավայր:

ВЛИЯНИЕ РЕЛИГИОЗНОЙ НРАВСТВЕННОСТИ НА ФОРМИРОВАНИЕ КОРПОРАТИВНОЙ КУЛЬТУРЫ ДЕЛОВОЙ СРЕДЫ

Инга Валерьевна Насилян
Преповадатель Государственной Академии кризисного управления,
кандидат экономических наук, доцент

Аннотация

Одна из важных составных частей современного управления - это корпоративная культура, для формирования которой разрабатываются соответствующие модели. На них оказывает воздействие ряд социально-экономических систем, где значительную роль играет религия. В статье изучены различные религиозные конфессии, и в частности, влияние религиозной нравственности на деловую среду, которая осуществляется с помощью корпоративной культуры. Представлены также критические подходы разных специалистов к данному вопросу и некоторые конкретные практические предложения. Изучены нормы армянской христианской

нравственности и проблемы, связанные с формированием национальной модели корпоративной культуры и представлены варианты их решения.

Ключевые слова: корпоративная культура, религиозная система, религиозная конфессия, религиозная нравственность, модели управления, ценности, деловая среда.

INFLUENCE OF RELIGIOUS MORALITY ON FORMING CORPORATE CULTURAL ENVIRONMENT

Inga Valeriy Nasilyan
Lecturer in Crisis Management State Academy,
Candidate of Economic Sciences, Associate Professor

Abstract

Corporate culture is one of the most important components of modern-day management, with the development of appropriate models that are influenced by a number of socio-economic systems, with religion playing a significant role. This article examines the impact of different religious denominations, and in particular, religious morality on the business environment through corporate culture. The article presents the critical approaches of various professionals on this issue, as well as a number of specific practical suggestions. Issues related to the interconnectedness of the Armenian Christian ethical norms and the model of national corporate culture are also studied and solutions are presented.

Keywords: corporate culture, religious system, religious belief, religious morality, models of governance, values, business.